"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 280-Լ

«19» փետրվարի 2025 թ.
ք. Երևան

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄ ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼԻՍ ԹԱՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 1359-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժ) ենթակետով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 4-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի փետրվարի 24–ի «Թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված տարածքներում երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման գործընթացը կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի N 246-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 213-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետը և նպատակ ունենալով կանոնակարգել Թատրոնի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների գները Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի 24-ի թիվ 213-Լ հրամանով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝

հրամայում եմ.

1. Սահմանել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքով երրորդ անձանց ծառայություններ մատուցելիս կազմակերպության կողմից մատուցվող հետևյալ լրացուցիչ ծառայությունների գները՝

1) EPSON EB-PU2246B պրոյեկտորի (18.000 լյումեն) օգտագործմամբ ծառայության մատուցում Թատրոնի ներսում՝ օրը 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,

2) EPSON EB-PU2246B պրոյեկտորի (18.000 լյումեն) օգտագործմամբ ծառայության մատուցում Թատրոնից դուրս՝ 1.000.000(մեկ միլիոն) ՀՀ դրամ, մեկ օրից ավել՝ կողմերի միջև պայմանավորված ավելի նվազ գնով:

3) Barco FLM HD18 Lumen1080p պրոյեկտորի (18 լյումեն) օգտագործմամբ ծառայության մատուցում Թատրոնի ներսում՝ օրը 200.000(երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

4) Barco FLM HD18 Lumen1080p պրոյեկտորի (18 լյումեն) օգտագործմամբ ծառայության մատուցում Թատրոնից դուրս՝ օրը 360.000(երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ,

5) Sanyo PLC XF-47 պրոյեկտորի օգտագործմամբ ծառայության մատուցում՝ օրը 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

6) Բալետային լինոլեումի օգտագործմամբ ծառայության մատուցում՝ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) << դրամ,

7) Ծանր ծուխ 3000w ստանալու մեկ ապարատի օգտագործմամբ ծառայության մատուցում Թատրոնի տարածքում՝ 50.000 (հիսուն հազար) << դրամ,

8) Ծանր ծուխ 3000w ստանալու մեկ ապարատի օգտագործմամբ ծառայության մատուցում թատրոնի տարածքից դուրս՝ 75.000 (յոթանասուն հինգ հազար) << դրամ,

9) SAFEX 3000W թեթև ծուխ ստանալու մեկ ապարատի օգտագործմամբ ծառայության մատուցում թատրոնի տարածքում՝ 50.000 (հիսուն հազար) << դրամ,

10) SAFEX 3000W թեթև ծուխ ստանալու մեկ ապարատի օգտագործմամբ ծառայության մատուցում թատրոնի տարածքից դուրս՝ 75.000 (յոթանասունհինգ հազար) << դրամ,

11) ANTARI 200 ձյուն ստանալու մեկ ապարատի օգտագործմամբ ծառայության մատուցում թատրոնի տարածքում՝ 50.000 (հիսուն հազար) << դրամ,

12) ANTARI 200 ձյուն ստանալու մեկ ապարատի օգտագործմամբ ծառայության մատուցում թատրոնի տարածքից դուրս՝ 75.000 (յոթանասունհինգ հազար) << դրամ,

13) Լազերի օգտագործմամբ ծառայության մատուցում՝ 15.000 (տասնհինգ հազար) << դրամ,

14) Լրացուցիչ լուսային, ձայնային սարքավորումներ Թատրոնի լուսային և ձայնային համակարգին միացմամբ ծառայության մատուցում՝ 100.000 (հարյուր հազար) << դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Թատրոնի տնօրենի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1359-Լ հրամանը:

3. Թատրոնի առցանց տոմսերի վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Թատրոնի տնօրեն՝ Կ. Դուրգարյան

ք. Երևան
«19» փետրվարի 2025 թ.